

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### **Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Արմավիրի մարզային հանձնաժողովի 2013թ. ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ**

Արմավիրի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրների լուծման, հավասար պայմանների, հասարակական կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովման, սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցելու ուղղությամբ մարզպետարանում իրականացվում են ամենօրյա աշխատանքներ:

Արմավիրի մարզում հավառված են 12960 հաշմանդամներ, որից առաջին խումբ՝ 697, երկրորդ խումբ՝ - 5785, երրորդ խումբ՝ - 5587, և մանկուց հաշմանդամ՝ - 691:

<< Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող >> ՀՀ Արմավիրի մարզային հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում գումարել է թվով 6 նիստեր: Նիստերի ընթացքում քննարկվել են ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից հաստատված 2013 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը և այդ ուղղությամբ կատարված աշխատանքների ընթացքը:

Պատասխանատու կառույցների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ սերտ համագործակցության արդյունքում, հանձնաժողովը ծավալել է հետևյալ գործունեությունը.

Շարունակվել է <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> անդամների մարզի թվով 8 համայնքներ այցելությունը: Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքը հիմնականում պահպանված է, ծնողները տեղեկացված են, իսկ երեխաները ծնողների օգնությամբ հաճախում են համապատասխան հաստատություններ: Հաշմանդամ ունեցող ընտանիքներին համայնքների ղեկավարները ցուցաբերել դրամական աջակցություն: Հաշմանդամ ունեցող թվով 84 ընտանիքների մարզպետի որոշմամբ տրվել է դրամական օգնություն:

Ուշադրության կենտրոնում է հաշմանդամություն ունեցող դպրոցահասակ երեխաների կրթական հաստատություններում սովորելու, մշակութային ծրագրերում նրանց ընդգրկելու խնդիրները: 2013 թվականի ընթացքում Արմավիր քաղաքի Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում ներառական կրթությամբ երեխաների խմբում ընդգրկված են թվով 46, Արմավիրի թիվ 6 հիմնական դպրոցում՝ 16, Վաղարշապատի թիվ 7 հիմնական դպրոցում՝ 28, Վաղարշապատի թիվ 9 հիմնական դպրոցում՝ 12 աշակերտներ: Ընդամենը՝ 102 աշակերտներ: Դասասենյակները վերանորոգված են, մասնագետներով համալրված, և դիտակտիկ նյութերով հագեցած:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասարկությանն ինտեգրելու նպատակով ինչպես նաև Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, որոնք լուսաբանվել են տեղական ՋԼՄ-ներով:

Արմավիր քաղաքի թիվ 1 հատուկ օժանդակ դպրոցի հաշմանդամ երեխաների համար՝ <<Մեծ մուլորակի մեր անկյունը>> խորագրով կազմակերպվել է հանդես-ցերեկույթ:

<<Նահիրի>> հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ-ն , Արմավիր քաղաքի թիվ 5 և Հացիկի հիմնական դպրոցների, Արվեստի պետական քոլեջի աշակերտների հետ այցելել են Արմավիր քաղաքի թիվ 1 հատուկ օժանդակ դպրոց՝ աշակերտներին բաժանվել են նվերներ: Ներկայացվել է համերգային ծրագիր, իսկ “Գրանդ Քենդի” ընկերության կողմից նրանց տրամադրվել է քաղցրավենիքի փաթեթներ:

<<Հուլիսի Մեծամոր>> ՀԿ-ն կազմակերպել է Կլոր սեղան հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքների անդամների, շահառուների, Մեծամոր համայնքի աշխատակիցների մասնակցությամբ, որի նպատակը իրազեկել հաշմանդամների իրավունքների մասին : Քննարկվել է նաև ամանորյա միջոցառումների կազմակերպումը:

<<Ճանապարհը բոլորի համար>> խորագրով հանդիպումը հաշմանդամ երեխաների համար, զուգակցվել է համատեղ նկարների ցուցահանդեսով:

Հայկական կարմիր խաչի ընկերության Արմավիրի երիտասարդ կարմիր խաչի բաժինը իրականացրել է “Բոլորս հավասար ենք” ծրագիրը՝ Արմավիր քաղաքի դպրոցների, նաև ներառական ուսուցման աշակերտների համար: Դեկտեմբերի 3-ին կամավորները համագործակցելով “Հուլիսի կամուրջ” ՀԿ-ի հետ դիտել են թատերական ներկայացում՝ “Աղախինը”, որի ավարտից հետո կամավորները դպրոցի կենտրոնական մուտքերի աստիճանները ներկել են դեղին գծերով, ինչը նախատեսված է տեսողության խնդիրներով անձանց համար:

<<Հանգրվան>> ՀԿ-ի և Լեհաստանի Պոզնանի քաղաքապետարանի սոցիալական հարցերով վարչության պատասխանատուների հետ համատեղ 18-45 տարեկան կույր հաշմանդամների համար իրականացվել է ծրագիր՝ ապահովելու տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամների զբաղվածությունը:

Հաշմանդամների ֆիզիկական մատչելիության խնդիրների հետ կապված մարզի հիմնականում քաղաքային համայնքների մշակութային և հասարակական այլ կառույցներում առկա են 46 թեքահարթակներ:

Մարզի հանրակրթական 114 դպրոցներից՝ 18-ում կան թեքահարթակներ:

Գործընթացը շարունակվում է:

Արմավիրի երեխայի զարգացման վերականգնողական կենտրոնում 2013 թվականի ընթացքում ամբուլատոր և զննվել են 100 հիվանդներ, ընդունվել՝ 78 և վերականգնողական բուժում են ստացել 36 հաշմանդամ երեխաներ:

Հաշմանդամներին վերականգնողական պարագաներով ապահովելու խնդիրները գտնվում է մարզպետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Թվով 8 երկրորդ խմբի հաշմանդամների “Փյունիկ” բարեգործական հիմնադրամի կողմից տրամադրվել են սայլակներ:

Մարզպետարան դիմած հաշմանդամ ունեցող ընտանիքների դիմումներում բարձրացված խնդիրներին հիմնականում վերաբերում են դրամական աջակցությանը, ինչպես նաև երկու երեխաների հետին քայլակի ձեռքբերմանը: Այդ ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրության արդյունքում << Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից հոդվածով դրամական օգնություն է հատկացվել 73 հաշմանդամների և հաշմանդամ ունեցող ընտանիքների:

Արմավիրի մարզի ս/թ մայիսի 12-ին կարկուտից տուժած համայնքների հողօգտագործող նպաստառու և ոչ նպաստառու հաշմանդամ ունեցող թվով 161

ընտանիքներ ընդգրկվել են գյուղական համայնքներում զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությունների վերականգնման ծրագրում:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրով մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում աշխատանքի են տեղավորվել թվով 9 հաշմանդամներ:

“Արմենիա Լայթուա” բարեգործական կազմակերպության կողմից Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 75 հաշմանդամների տրամադրվել է օգնություն՝ օգտագործված հագուստի տեսքով, իսկ “Փյունիք” բարեգործական հիմնադրամի կողմից՝ վերնաշապիկներ: Արզնի, Ջերմուկ և Գանձաղբյուր առողջարանային և վերականգնողական բուժման ուղեգրեր են տրամադրվել թվով 97 հաշմանդամների, այդ թվում Ջերմուկ՝ -25, Արզնի՝ -23, Գանձաղբյուր՝-49: